



Մարկոսի արձանագրությունը

The Foundation and Activity of the Saghmosavanq Qarandzav Skit (Hermitage) in the XII Century (Summary)

In the XII c. there was founded the Skit for monks which is situated in the two-storey cave on the left bank of the Qassakh River, in the part called Vasakamoot that stretches from Saghmosavanq to Hovhannavanq along the Qassakh Gorge. Here the monks were engaged both in the educational activity and copying the manuscripts. There were preserved two manuscripts copied by the monk called Marcos Kaghgrich. They were copied correspondingly in 1185-1188 and 1194-1195. In that period the Turk-Seljuks were ruling over the central part

of Armenia. The entries of the manuscripts testify to the fact that the monks from Qarandzav Skit did not only carry out spiritual activities but also favored to Zakarian Armenian-Georgian liberation campaign carrying out special preaching and reconnaissance activities. A group of monks from this Skit was caught by Seljuks, they were thrown into the prison and subjected to torments. But later they were let free because of the lack of evidence. The monks continued to carry out the activities thus favoring to the liberation struggle.

ԱՆԻԻ ԿՈՐԾԱՆՄԱՆ ԱՒԱՆԴԱԶՐՈՅՑԸ (ԲԱՆԱՒՈՐ ՊԱՏՈՒՄԻՑ ԳՐԱՒՈՐ ՄՇԱԿՈՒՄ)

Սարգիս Բալդարեան

Անիի՝ որպէս միջնադարեան Հայաստանի նշանաւոր կենտրոնի դերակատարութեան կարեւորութիւնը գիտակցուել է ինչպէս քաղաքի տնտեսական ու մշակութային զարթոնքի ականատեսների կողմից, այնպէս էլ Անիի աւերմանն ու ամայացմանը յաջորդած ժամանակահատուածում: Մարտիրոս Ղրիմեցու (մօտ 1620-1693 թթ.) կողմից տրուած «քաղաքն մեծ Անի, մերս ազգի պարծան»¹ ուշագրաւ բնորոշումը լիովին արտացոլում է լքուած քաղաքի փառաւոր անցեալի արժեւորումը անգամ ժէ դարում: Ուշմիջնադարեան ժամանակաշրջանում Անիի նկատմամբ չմարող հետաքրքրութիւնը դրսեւորուել է նաեւ դէպի քաղաքի աւերակները կատարուած բազմաթիւ ուղեւորութիւնների տեսքով:

Նկատառելի է, որ պետականութեան բացակայութեան պայմաններում աւելի էր ընդգծուած Անիի՝ որպէս բուն Հայաստանում ստեղծուած վերջին թագաւորութեան մայրաքաղաքի նշանակութիւնը: Բագրատունիների Հարստութեան կործանումը մտազուգորդում էր պետականութեան տեւական բացակայութեան հետ: Այդ մտայնութիւնը Անիի՝ իբրեւ Բագրատունեաց Հայաստանի կենտրոնի դերակատարութիւնը Հարստացում էր պետականութեան խորհրդանիշի գործառոյթով²: Ուստի ամա-

յացած քաղաքի նկատմամբ առաջացած հետաքրքրութիւնը ոչ միայն արդիւնքն էր երբեմնի ծաղկուն վիճակի, այլ նաեւ պայմանաւորուած էր Հայութեան քաղաքական ճակատագրի ասպարէզում ստացած առանձնայատուկ կարգավիճակով:

Հայութեան կեանքի տարբեր հարթութիւններում Անիի ունեցած ուշագրաւ դերակատարութեան ներկայացումը օրինաչափօրէն առաջ է բերում հետաքրքրական հարցադրում՝ քաղաքի կարեւորութեան գիտակցումն ու նրա մասին պատկերացումներն ինչպիսի՞ արտացոլում են ստացել ժողովրդական ընկալումներում: Խնդրի պարզաբանումը, որն էլ հէնց սոյն աշխատանքի առանցքն է կազմում, երեւան է հանում Անիի պատմութեան շուրջ ձեւաւորուած ժողովրդական պատկերացումների երկու ուղղութիւն: Դրանցից մէկի համաձայն՝ անեցիների խեղուած կենսակերպն ու նրանց շրջանում տիրող անբարոյ բարքերն այնպիսի ահազանացող չափերի էին հասել, որ Աստուած իրավիճակի յաղթահարումը տեսաւ քաղաքը երկրաշարժով աւերելու մէջ: Անիի կործանման համանման մեկնաբանութեան մէջ առանձնակի կարեւորութիւն ունէր քաղաքի անիծուած լինելու գաղափարը. անեցիներին մոլորութիւնից դարձի բերելու առաքելութիւնն ստանձնած միջնորդը լիակատար անյաջողութեան մատուցելուց յետոյ անիծում է քաղաքը, ինչին էլ յաջորդում է աստուածային պատիժը երկրաշարժի տեսքով: Փաստօրէն Հայ Հասարակութեան հաւաքական մեղաւորութեան գաղափարը, որի արմատները հասնում են մինչեւ վաղ միջնադար, տեղայնացուել է՝ հիմք ծառայելով Անիի ամայաց-

1 Ա. Մարտիրոսեան, Մարտիրոս Ղրիմեցի, Երեւան, 1958, էջ 145:
2 Համանման դիտարկումների շուրջ հմմտ. տե՛ս նաեւ P. Tchobanian, Ani et son mythe (XIIIe-XIXe siècles), Ani, Capitale de l'Arménie en l'an mil, Paris, 2001, p. 277. Բ. Կովաչ, Հայոց մայրաքաղաք Անի՞ որպէս յիշողութեան վայր (lieu de mémoire), «Պատմութիւն եւ հասարակագիտութիւն», հտ. 1, Երեւան, 2015, էջ 102:

ման փաստի ժողովրդական ընկալման համար: Վերջինիս քննությունը, որն ընկած է յետագայ շարադրանքի հիմքում, ակնյայտ է դարձնում այնպիսի պատկերացումների առկայությունը, որոնք Անին բնորոշել են որպես անիծուած քաղաք:

Այս համապատկերում թերեւս դարմանք կարող է առաջ բերել այն հանգամանքը, որ ուշ միջնադարից սկսած Արեւելեան Եւրոպայի բազմաթիւ հայկական գաղթօջախների, ինչպէս նաեւ՝ բուն Հայաստանի մի շարք բնակավայրերի հայութիւնն իրեն հռչակում է անեցիների յետնորդ: Ընդ որում՝ դրանց աշխարհագրութիւնն ու բազմաքանակութիւնը³ կասկած չի թողնում, որ դործ ունենք ոչ այնքան իրական փաստի յիշողութեան, որքան անեցիների սերունդ համարուելու ձգտումների հետ: Անէծքի գաղափարի եւ համանման նկրտումների անհամատեղելիութիւնը գիտակցուել է դեռեւս ժէ դարում: Պատահական չէ, որ Սիմէոն Լեհացին, ինչպէս աւելի մանրամասն կը տեսնենք ստորեւ, հարկ է համարում ընդգծել, որ անեցիների ժառանգ լինելը ամենեւին էլ նախատելի չէ՝ բերելով հետաքրքրական արդարացում⁴: Անեցիների յետնորդ համարուելու բուն ցանկութեան ներքոյ կարելի է տեսնել քաղաքի նշանակալի դերակատարութեան բարձր գնահատականի արձագանքը:

Ժողովրդական ընկալումներում, փաստորէն, մի կողմից արժեւորում է քաղաքի հարուստ ու փառաւոր անցեալը՝ անեցիների հետ անգամ ժառանգական կապ ունենալու ցանկութեան տեսքով, իսկ միւս կող-

3 Ղ. Ալիշան, *Օրիակ*, Վեներիկ, 1881, էջ 104. Թ. Յակոբեան, *Անիի պատմութիւն*, գիրք երկրորդ, Երեւան, 1982, էջ 347, Ա. Ղանալանեան, *Աւանդապատում*, Երեւան, 1969, էջ 46, 156, 161, 169, 200:

4 Սիմէոն դարի Լեհացոյ Ուղեգրութիւն, *տարեգրութիւն եւ յիշատակարանը*, ուսումնասիրեց եւ հրատարակեց Ն. Ակիմեան, Վիեննա, 1936, էջ 346-347:

մից տարածում է ստանում Անիի՝ անիծուած քաղաք լինելու եւ նրա աւերումն ու ամայացումը աստուածային պատժով բացատրելու մտայնութիւնը: Վերջինիս հետազոտութիւնը թէեւ ուսումնասիրողների տեսադաշտից դուրս է մնացել, այնուհանդերձ օժտուած է քաղաքի աւերման փաստի շուրջ ստեղծուած աւանդազրոյցը պարզաբանելու եւ անիազիտութեան մի գեղեցիկ դրուագ երեւան հանելու հնարաւորութեամբ:

Ժէ դարում աւարտին էր հասել Անիի ամայացման ու քաղաքային կեանքի անկման այն գործընթացը, որը նախընթաց ժամանակաշրջանում ուղեկցուած էր օտար ասպատակութիւնների յարուցած ծանրագոյն հետեւանքներով: Ուսումնասիրողների ճշգրիտ ենթադրութեամբ՝ այդ ժամանակ Անին պէտք է վերածուած լինէր գիւղական աննշան բնակավայրի⁵: Այդ հանգամանքը, սակայն, ներգործութիւն չի թողել Բագրատունեաց Հայաստանի երբեմնի մայրաքաղաքի շուրջ ձեւաւորուած բուն հետաքրքրութեան վրայ. ժէ դարի դրաւոր յուշարձաններում առատ են Անիի վերաբերեալ դանազան յիշատակումները: Հանգամանալից հետազոտութիւնը դրանցում է յայտ է բերում ուշադրաւ դրուագներ քաղաքի կործանման մասին անեցի գաղթականութեան պատկերացումների վերաբերեալ:

Համանման վկայութիւններից առաջինում, որը պահպանուել է Սիմէոն Լեհացոյ (1584-1637 թթ.) ուղեգրութեան մէջ, Լուովի հայութեան մասին արձանագրուած է. «Եւ ասին թէ յԱնիու եկած են տեղացս (Լուովի - Ս. Բ.) Հայք»⁶: Անդրադարձ կատարելով անեցիների անցեալին՝ ուղեգիրը

5 И. Орбели, *Развалины Ани*, СПб, 1911, с. 28, С. Mutafian, *La mort d'Ani: Gengiskhanides, Timourides et Safavides (XIIIe-XVIIe siècles)*, Ani, Capitale de l'Arménie en l'an mil, Paris, 2001, p. 121. Թ. Յակոբեան, *Աշ. աշխ.*, էջ 350:

6 Սիմէոն Լեհացի, էջ 346:

կատարում է հետաքրքրական դիտարկումներ. «Ջքաղաքն եւ դմնացեալսն անիծեց եւ զեկեալսն օրհնեաց, որպէս ի հինն զՍողոմ եւ զԳոմոր անիծեց եւ զՂովտ իւրովքն փրկեց. նոյնպէս զԱնի չար բնակչօք կործանեց եւ զբարիսն եհան ի նմանէ. որպէս զՆոյ ապրեցոյց եւ զաշխարհս ամենայն կորոյս»⁷: Իր այս բացառիկ հաղորդմամբ Սիմէոն Լեհացին, Անին զուգարելով Սողոմ-Գոմորի հետ, նրանց կործանման պատմութիւնը համարում է նոյնական. հայոց նախկին մայրաքաղաքը եւս, իր «չար բնակչօք», յարուցել է Աստուծոյ բարկութիւնը եւ արժանացել նրա պատժին: Նկատենք, որ ուղեգիրը չի յստակեցնում, թէ ով է անիծել քաղաքը, սակայն ինչպէս ընդհանուր համատեքստից, այնպէս էլ «որպէս ի հինն զՍողոմ եւ զԳոմոր անիծեց եւ զՂովտ իւրովքն փրկեց», «որպէս զՆոյ ապրեցոյց եւ զաշխարհս ամենայն կորոյս» արտայայտութիւններից լիովին հասկանալի է դառնում, որ խօսքը Աստուծոյ մասին է: Այս հարցի պարզաբանման կարեւորութիւնը կ'երեւայ յետագայ շարադրանքում, երբ Անիի կործանման միեւնոյն մօտեցումն արտացոլող այլ երկերում հանդիպենք նոր գործող անձի:

Հետաքրքրական է նաեւ աստուածային պատուհասից փրկուած անեցիներին Ղովտի ու Նոյի հետ համեմատելու դրուագը⁸: Դրա ասպարէզ գալը թերեւս նպատակ ունէր փարատելու գաղթավայրերի հայութեան այն մտահոգութիւնը, որ իրենք կարող են լինել Աստուծոյ զայրոյթը յարուցած

7 Նոյն տեղում, էջ 346-347:
8 Լուովի հայութեան՝ անեցիների յետնորդ լինելու գնահատութեան մի դրսեւորում է ուշ միջնադարեան չափածոյ ստեղծագործութիւններից մէկի հետեւեալ հատուածը. «Չի հպարտ եւ անձնահա եւ, / Չի բնական Անեցիք եւ» (Ղ. Ալիշան, *Կամեմից. տարեգիրք հայոց Լեհաստանի եւ Ռումեանիոյ*, Վեներիկ, 1896, էջ 202): Այս հարցի շուրջ տեսնաւ Հ. Մարգարեան, *Անի ու միջնադարեան չափածոյ ստեղծագործութիւններում*, «Անի», 1992, թիւ 2, էջ 9-11:

անեցիների շառաւիղ: Հէնց այդ նկատուումով է, որ ուղեգիրը հարկ է համարում ընդգծել. «Եւ այս չէ նախատինք, եթէ են Անիցիք»⁹: Սիմէոն Լեհացին նկատուելի տեղեկութիւն է հաղորդում նաեւ անեցիների գաղթի երթուղու վերաբերեալ. «Եւ զի ըստ պատմագրաց երկու բաժին եղեալ՝ մինն եկեալ ի Քաֆա եւ Ախքէրման, որ դեռ կան ի Սուլումանաստր եւ հայնակ գրուցեն. եւ Անկուրիա եւ անտի ի Լէհ»¹⁰: Սիմէոն Լեհացին, այսպիսով, Անիի աւերումն ու ամայացումը կապում է ոչ թէ ռազմաքաղաքական անցուդարձերի, այլ երկնային պատժի հետ: Ընդգծենք նաեւ, որ նման մօտեցման գաղափարական արմատները հասնում են մինչեւ ԺԱ դ. (Արիստակէս Լաստիւերցի, Յակոբ Սանահնեցի, Յովհաննէս Կոզեռն)՝ Սիմէոն Լեհացոյ երկում որոշակի նորամուծութիւն, այնուհանդերձ, առկայ է. առաջին անգամ հանդէս է գալիս աստուածային անէծքի գաղափարը:

Նոյն մտայնութեան արձագանքը նկատելի է նաեւ ժէ դարի նշանաւոր եկեղեցական գործիչ ու մատենագիր Մարտիրոս Ղրիմեցոյ «Պատմութիւն Ղրիմայ յերկրի» տաղում (1672 թ.): Ղրիմի բնաշխարհի ու պատմութեան ամփոփ նկարագրութեանը յաջորդում են հայութեան գաղթն ու այս երկրամասում հաստատումն արտացոլող դրուագներ: Հեղինակը, հետամուտ լինելով իր առաջ դրուած խնդրին՝ դրիմահայութեան պատմութեան չափածոյ շարադրանքին, մտահոգութիւն է յայտնում ծագած դժուարութիւնների վերաբերեալ. «Քանզի պատմագրոց չունիմք նախնական, / Գրեալ վասն նորին պարզ եւ յայտնի

9 Սիմէոն Լեհացի, էջ 346:
10 Նոյն տեղում:
11 Z. Pogossian, *The Last Emperor or the Last Armenian King? Some Considerations on Armenian Apocalyptic Literature from the Cilician Period*, *The Armenian Apocalyptic Tradition: A Comparative Perspective*, Leiden-Boston, 2014, pp. 459-461.

բան»¹²: Դիմելով «անգիր գրուցաց» ընձեռած տուեալներին՝ տաղասացը Ղրիմում հայերի հաստատման գործընթացը տրոհում է երկու փուլի ու դրանք կապում մի դէպքում Անիի կործանման, իսկ միւս դէպքում՝ Ջալալիների ասպատակութիւնների հետ: Նախքան անեցիների գաղթի ներկայացումը Մարտիրոս Ղրիմեցին անդրադառնում է Բագրատունեաց պետութեան ու նրա մայրաքաղաքի անկման հանգամանքներին: Ուշագրաւ է այդ իրադարձութեան պատճառի մասին հեղինակի համառօտ հաղորդումը. «Հանգոյն Իսրայէլի, որպէս ասացան, / Եղեն տիրադաւաճ ազգք մեր հայկազան»¹³: Այս դէպքում եւս գործունէնք Անիի անկումը նրա բնակիչների մեղաւորութեամբ բացատրող պատկերացումների հետ: Ի վերջոյ, «յաստուածասաստ եւ խիստ եկեալ բարկութեան» պայմաններում անեցիները թողնում են քաղաքը եւ հաստատուում զանազան վայրերում: Ոսկէ Հորդայի սահմաններում ապաստանած խմբերը, «ազգաց յոնական» հայածանքներից խուսափելով, դեսպաններ են ուղարկում Կաֆայի ջենովական կառավարչի մօտ՝ նախապատրաստելու համար իրենց տեղափոխութիւնը Ղրիմ: Անեցիները, ըստ այս չափածոյ ստեղծագործութեան, Ղրիմում հաստատուեցին Հայոց 780 թ., այսինքն՝ 1331 թ.:

Հետաքրքրութիւն է յարուցում այն հանգամանքը, որ Մարտիրոս Ղրիմեցին իր միւս ստեղծագործութիւնները շարադրելիս, ինչպէս, օրինակ, «Ողբ Երեմիա մարգարէին» ու «Կարգ եւ թիւ թագաւորաց հայոց» երկերում, ոչ թէ մեղքի, այլ պետականութեան վերացման մէջ է որոնում երկրի աւերման պատճառը¹⁴: Սակայն Անիի անկումը, ինչպէս տեսանք, չի համարում քաղաքական իրադրութեան հետեւանք՝ այդ-

12 Ա. Մարտիրոսեան, Գ. աշխ., էջ 143:
 13 Նոյն տեղում, էջ 145:
 14 Նոյն տեղում, էջ 44:

պիսով հաւատարիմ մնալով Սիմէոն Լեհացու արձանագրած մտայնութեանը:

Ղրիմահայութեան պատմութիւնն աւելի մանրամասն արտացոլում է ստացել 1690 թ. ընդօրինակուած մի Յայսմաւուրքի ընդարձակ յիշատակարանում¹⁵, որը գրուել է Դաւիթ Ղրիմեցու կողմից իրենց Պահլաւունի հռչակած Տրդատի ու Աննայի պատուէրով: Յատկանշական է, որ գրիչը ընդարձակում է յիշատակարանի աւանդական շրջանակները եւ այն վերածում Ղրիմահայութեան պատմութեան: Այս դէպքում եւս Ղրիմի հայերը հռչակուած են անեցիների շառաւիղ, ուստի անդրադարձ է կատարում վերջիններիս գաղթի նկարագրութեանը: Դաւիթ Ղրիմեցին ընդարձակ հատուածներ է յատկացնում մոնղոլների Անի կատարած արշաւանքին՝ ակնյայտօրէն դիմելով Կիրակոս Գանձակեցու Պատմութեանը¹⁶: Քաղաքի աւերումն ու բնակչութեան գաղթը համարելով մոնղոլական արշաւանքի հետեւանք՝ գրիչը, այնուհանդերձ, կարեւոր դեր է վերապահում նաեւ աստուածային բարկութեանը. «Բարկացաւ տէր ի վերայ մեր»¹⁷: Յետագայ շարադրանքում պատկերում է անեցիների՝ մեզ յայտնի տեղափոխութիւնը Ոսկէ Հորդայի տարածք, այնտեղից էլ՝ Ղրիմ:

Յիշատակարանում ու Մարտիրոս Ղրիմեցու տաղում բերուած իրադարձութիւնների համապատասխանութիւնն արդէն իսկ արժանացել է հետազօտողների ու-

15 Յիշատակարանի հատուածական հրատարակութիւնն իրականացուել է դեռեւս 1830 թ. (Մ. Բժշկեանց, *Մանապարհորդութիւն ի Լեհաստան եւ յայլ կողմանս բնակեալս ի հայկազանց սերելոց ի նախնեաց Անի քաղաքին*, Վեներիկ, 1830, էջ 335-342): Ամբողջական հրատարակութիւնը տե՛ս Դիւան հայոց պատմութեան, գիրք Թ, հրատարակեց Գ. Աղանեանց, Թիֆլիս, 1911, էջ 488-496. Ղ. Ալիշան, *Հայաստանում*, մասն Բ, էջ 575-581:
 16 Կիրակոս Գանձակեցի, *Պատմութիւն Հայոց*, աշխատասիրութեամբ Կ. Մելիք-Օհանջանեանի, Երեւան, 1961, էջ 258-259:
 17 Դիւան հայոց պատմութեան, գիրք Թ, էջ 490:

շաղրութեանը: Հիմնական բարդութիւնը վերաբերում է դրանց հաւաստիութեան, ինչպէս նաեւ՝ փոխադարձ կապի պարզաբանման հարցերին: Այսպէս՝ Վ. Միքայէլեանը, լիովին արժանահաւատ համարելով նկարագրուած անցուղարձերը, ենթադրում է «գրաւոր հին եւ հաւաստի մի հիմքի» առկայութեան մասին¹⁸: Ընդհանուր աղբիւրի դոյութիւնն ընդունում է նաեւ Է. Պիվազեանը¹⁹: Դրան հակառակ՝ Լ. Խաչիկեանը Մարտիրոս Ղրիմեցու տաղը համարում է յիշատակարանի հիմնական աղբիւր եւ համոզիչ փաստարկներ բերում թէ՛ մէկը, թէ՛ միւսը անարժանահաւատ համարելու տեսակէտի օգտին²⁰: Ա. Մարտիրոսեանը եւս ընդունում է յիշատակարանի հեղինակի ծանօթութիւնը խնդրոյ առարկայ տալին. «Միեւնոյն ձեռով են ներկայացուած ոչ միայն պատմական դէպքերն ու շարժառիթները, այլեւ կան ոճական ու արտայայտչական շատ նմանութիւններ»²¹:

Ինչպէս տեսանք, Ժէ դ. հայ մատենագրութեան մէջ Արեւելեան Եւրոպայի հայկական գաղթավայրերի սկզբնաւորումը բխեցում է Անիում ծաւալուած իրադարձութիւններից: Կարեւոր է մէկ անգամ եւս արձանագրել, որ մեզ յայտնի գրաւոր յուշարձաններից երեքը այս առնչութեամբ որոշիչ դեր են վերապահում անեցիների յարուցած աստուածային բարկութեանը: Փաստօրէն, այս դարաշրջանում արդէն իսկ նկատելի են պատկերացումնե-

18 Վ. Միքայէլեան, *Ղրիմի հայկական գաղութի պատմութիւն*, Երեւան, 1964, էջ 80:
 19 Է. Պիվազեան, *Գրախօսութիւն՝ Ա. Մարտիրոսեան, Մարտիրոս Ղրիմեցի*, Երեւան, 1958, ՊԲՀ, 1959, թ. 1, էջ 259:
 20 Լ. Խաչիկեան, *Հայերը Հին Մոսկուայում եւ Մոսկուա տանող ճանապարհների վրայ*, «Բանբեր Մատենադարանի», հտ. 13, Երեւան, 1980, էջ 24-27: Տե՛ս նաեւ առանձին հրատարակութեամբ՝ Մ. Խաչիկեան, *Армяне в древней Москве и на путях везуших в Москву*, Ереван, 2014.
 21 Ա. Մարտիրոսեան, Գ. աշխ., էջ 46, ծնթ. 1:

րը Անիի անկման հարցում Աստուծոյ միջամտութեան ու անէծքի մասին:

Այդ մտայնութիւնը վերջնական գրաւոր ձեւակերպում է ստանում ԺԸ դ., երբ յետագայում հայոց կաթողիկոսներ Աբրահամ Կրետացին ու Ղազար Զահկեցին հանդէս են գալիս այդ հարցն արծարծող համեմատաբար ծաւալուն անդրադարձով:

1734-1737 թթ. Ամենայն հայոց կաթողիկոս Աբրահամ Գ Կրետացու մատենագրական ժառանգութեան մէջ առկայ է «Պատմութիւն Անի քաղաքին» խորագրով մի երկ՝ գրուած 1709-1734 թթ. ընթացքում, այսինքն՝ այն ժամանակահատուածում, երբ հեղինակն զբաղեցնում էր Թրակիայի (Ռոդոսո, Թեքիրդաղ²²) հայոց թեմի առաջնորդի պաշտօնը: Այն հրատարակուել է 1734-1736 թթ. անցուղարձերն ընդգրկող նրա հիմնական պատմագրական աշխատութեան հետ մէկտեղ՝ որպէս յաւելուած²³: Բնագիրը պահպանուել է ընդամէնը մի ձեռագրում, որն ընդօրինակուել է 1756 թ. Կաֆայում, եւ ներկայումս պահոււմ է Մաշտոցի անուան Մատենադարանում 1781 թուահամարի ներքոյ: Մեր օրերը հասած միւս ձեռագիր մատենաներում բնագրի բացակայութիւնը թոյլ է տալիս ենթադրել երկի սակաւ յայտնիութեան մասին: Պատկերն այս առումով թերեւս չի փոխուել. Աբրահամ Կրետացու մատենագրական վաստակն ամփոփ կերպով գնահատելիս, Պատմութիւնից եւ «Մոցի տետրակից»

22 Թեքիրդաղ՝ Թագաւոր-Ռաղ անուանումը տրուել էր 1606-1607 թթ. Բարձր Հայքի տարածքից այստեղ փոխադրուած հայերի կողմից՝ ի յիշատակ Հայաստանի Թագաւոր-Ռաղի. Ս. Տեր-Աւետիսեան, *Արրահամ Կրետացու յիշատակարանը* (ծոցի տետրակը), «Երեւանի պետական համալսարանի գիտական աշխատութիւններ», հտ. 13, Երեւան, 1940, էջ 288, ծնթ. 1:
 23 Արրահամ կաթողիկոսի Կրետացոյ Պատմագրութիւն անցիցն իրոց եւ Նատր-Օսիին պարսից, վաղարշապատ, 1870, էջ 101-109: Աշխարհարար թարգմանութիւնը, ծանօթագրութիւններով հանդերձ, տե՛ս Կ. Մաթեոսեան, *Անի-Շիրակի պատմութեան էջեր*, Երեւան, 2010, էջ 266-276:

բացի, հիմնականում յիշատակութեան են արժանանում միայն նրա թողած կոնդակները²⁴: Առանձին դէպքերում առկայ հակիրճ անդրադարձերն էլ չեն սպառում պատասխանի կարիք ունեցող հարցերի շրջանակը: Ուստի զարմանալի չպէտք է թուայ այն հանգամանքը, որ երկի բնոյթը հարկադրել է Լ. Բաբայեանին արձանագրել. «Միալաշատ այդ գործը դժուար թէ կրետացու գրչին պատկանի»²⁵:

Նախեւառաջ, տեղին կը լինի հնարաւորինս հակիրճ անդրադարձը երկի բովանդակութեանը: Բիւզանդացիները հրաւիրում են հայոց թագաւորին, պատուով դիմաւորում եւ ջերմ ընդունելութեան արժանացնում: Սակայն հայոց իշխանները նամակ են գրում կայսրը՝ խնդրելով արգելել թագաւորի վերադարձը եւ փոխարէնն ուղարկել «ոստիկան»: Նամակի հետ միասին ուղարկում է նաեւ Անիի ոսկէ բանալին: Այսպէս թագաւորութիւնը վերացում է, եւ սկսում են իշխել բիւզանդական պաշտօնեաներ: Յետոյ Անիում տարածում է ստանում բարբերի համատարած անկման գործընթացը, ընդ որում՝ այն աստիճան, որ Աստուած որոշում է Անին աւերել: Բայց նախքան այդ, Աստուած «անեցւոցն ազդ արար ի ձեռն Յոհաննէս վարդապետի որ մականունն Պիուզ կոչի»: Վերջինս ոչ միայն չի կարողանում անեցիներին դարձի բերել, այլեւ բազմիցս ծագրի առարկայ է դառնում ու անարգանքի ենթարկւում, ուստի հարկադրուած է լինում անիձել քաղաքը եւ յայտարարել. «Տէր, այլ ոչ լինիմ երաշխաւոր»: Այս ամէնից յետոյ «էջ սաստիկ բարկութիւնն Աստուծոյ» երկրաշարժի տեսքով: Անեցիները հարկադրուած են լինում լքել քաղա-

24 Տե՛ս օրինակ Պ. Յովհաննիսեան, Աբրահամ Գ. Կրետացի, - «Ամենայն Հայոց կաթողիկոսներ», Էջմիածին, 2008, էջ 12:
 25 Լ. Բաբայեան, Դրուագներ Հայաստանի XIV-XVIII դարերի պատմագրութեան, Երևան, 1984, էջ 184:

քը եւ հեռանալ այլուր՝ Վան, Զուղա, Կաֆա եւն: Երկի վերջին մասում առկայ է համառօտ անդրադարձ կաֆայահայութեան պատմութեանը²⁶:

Նախեւառաջ, ծագում է հետեւեալ հարցադրումը՝ դիպաշարը հեղինակի ստեղծագործական մտածողութեան արդիւնքն է, թէ՞ համահունչ է ժողովրդական ընդհանրական ընկալմանը: Այս առումով յատուկ ուշադրութեան են արժանի ժժ դարի մի շարք ուղեգիր-ճանապարհորդների երկերը: Այսպէս՝ Մ. Բժշկեանցը, «Վերջին կործանումն Անույ» խորագրի ներքոյ պատմելով 1319 թ. երկրաշարժի ու Յովհաննէս Երզնկացու անէծքի մասին, յաւելում է, որ այդ ամէնը «անեցիք աւանդութեամբ պատմեցին մեզ»²⁷: Խ. Աբովեանը 1847 թ. հոկտեմբերին Անի կատարած այցելութիւնից յետոյ գրի է առնում իր մտորումները եւ զարմանք արտայայտում, որ «ժողովուրդը մինչեւ այժմ էլ իր գրոյցն է պնդում» այն մասին, որ քաղաքը կործանուել է «ինչ-որ մի կուսակրօնի սրբազան շուրթերի անէծքով»²⁸: Ա. Ալթունեանը, որը 1876 թ. շրջագայել է Արեւելեան Եւրոպայի հայկական դաղթավայրերում, ներկայացնում է այդ նոյն պատմութիւնը «անեցւոց մէջ աւանդութիւն մը կայ թէ...» արտայայտութիւնից յետոյ²⁹: Այս վկայութիւնները, ինչպէս նաեւ՝ դեռեւս ժէ դ. նոյն մտայնութեան տարածուած լինելը

26 Աբրահամ Կրետացի, էջ 101-109:
 27 Մ. Բժշկեանց, Աշխ., էջ 67:
 28 Խ. Աբովեան, Ուղեորութիւն դէպի Անիի աներակները, - «Երկեր», Երևան, 1984, էջ 655: Յատկանշական է, որ Անիի մասին հետաքրքիր դիտարկումներ կան նաեւ «Վերջ Հայաստանի» պատմավեպում. այս մասին տե՛ս Վ. Դեռիկեան, Արարատն ու Անին՝ Աբովեանի գաղափարական որոնումներում, - «ՎԷՄ», 2009, թիւ 3, էջ 56-73. Ա. Դոյումյանեան, Անի մայրաքաղաքը Խ. Աբովեանի եւ Արա ժամանակակիցների գնահատմամբ, - ՊԲՀ, 2010, թիւ 1, էջ 44-56:
 29 Ա. Ալթունեան, Տեղեկագրութիւն հայոց գաղթականութեան որք ի Մոլտո-Վալաքիա, Հունգարիա եւ ի Լեհաստան, Ֆօքշան, 1877, էջ 19:

ցոյց են տալիս, որ Աբրահամ Կրետացին հանդէս է գալիս որպէս ոչ թէ ինքնուրոյն ստեղծագործող, այլ, ներկայիս ըմբռնմամբ, բանահաւաք: Այսպիսով՝ գործ ունենք Անիի կործանման վերաբերեալ ի յայտ եկած ժողովրդական աւանդադրոյցի հետ, որը գրաւոր արտայայտութիւն է ստացել ինչպէս ժէ դ. մի քանի հեղինակների կողմից, այնպէս էլ «Պատմութիւն Անի քաղաքին» երկում: Այս ամէնի համապատկերում կարելի է արձանագրել, որ խնդրոյ առարկայ աշխատութիւնը ուշադրաւ է նաեւ պատմագրութիւն-բանահիւստութիւն առնչակցութիւնների ուշմիջնադարեան դրուագ լինելու առումով:

Ի տարբերութիւն նախորդ հեղինակների, որոնք բաւարարուել են ժողովրդական ընկալումն արտայայտող առանձին հատուածների շարադրմամբ՝ Աբրահամ Կրետացին այս իմաստով հետեւողական աշխատանք է կատարել: Նա ոչ միայն գրական մշակման է ենթարկել աւանդադրոյցը, այլեւ խորացրել նրա գաղափարախօսական ուղղուածութիւնը: Այսպէս՝ հեղինակին մեծապէս մտահոգել է անեցիների շրջանում տարածում ստացած մեղքերի ողջ պատկերն ի ցոյց դնելու խնդիրը, ուստի նա հերթականութեամբ թուարկել է գրանք³⁰: Ընդ որում, համեմատութիւնը ցոյց է տալիս, որ Աբրահամ Կրետացին անեցիներին է վերագրում բոլոր եօթ մահացու մեղքերը: Անիի բնակչութեան բարոյազրկման այդչափ ծանր աստիճանը պէտք է առաջ բերէր նոյնքան ծանր պատիժ, հետեւաբար՝ երկում նկարագրուած են նաեւ նախքան երկրաշարժը անեցիներին պատուհասած մի շարք զարմանալի երեւոյթներ, որոնք վերցուած են Աստուածաշնչի զանազան հատուածներից³¹:

30 Աբրահամ Կրետացի, էջ 102-104:
 31 Նոյն տեղում, 105-107: Խօսքը վերաբերում է սաստիկ մահացութեան, գայլերի բազմապատու բուրվաթի բոցից բազմաթիւ մարդկանց պոռելու դրուագներին: Նշենք նաեւ, որ «Արա-

Սիմէոն Լեհացու ուղեգրութեան համապատասխան հատուածը քննելիս արդէն իսկ հանդիպեցինք Անիի եւ աստուածաշնչական Սողոմի միջեւ անցկացուած համեմատութեան: Աբրահամ Կրետացին թէեւ չի յիշատակում վերջինիս անունը, այնուհանդերձ հետեւելով այդ քաղաքի կործանման ընթացքի նկարագրութեանն ու պահպանելով աստուածաշնչական օրինաչափութիւնը՝ ներկայացնում է անեցիներին դարձի բերելու Աստուծո վերջին փորձի մասին: Եթէ Սողոմի դէպքում այդ կարեւոր առաքելութիւնը փորձու է ստանձնել Աբրահամը, Նինուէի պարագայում՝ Յովհաննը, նախաջրհեղեղեան ժամանակահատուածում՝ Նոյը, ապա այս դէպքում Անիի կործանմանը նախորդում է Յովհաննէս Պիուզ Երզնկացու՝ որպէս Աստուծու եւ մարդկանց միջեւ միջնորդի գործունէութիւնը³²: Նշենք նաեւ, որ Աստուածաշնչի ներկայութիւնը աւանդադրոյցի՝ գրաւոր մշակման փուլն անցած տարբերակում այսքանով չի սահմանափակուում. հագուածները չեն Սբ. Գրքի զանազան հատուածներից մարգարէների խօսքերի մէջբերումները: Այսպիսով, հաւանաբար աւանդադրոյցի գրաւոր մշակումը Աբրահամ Կրետացու գրչի ներքոյ ընթացել է ըստ աստուածաշնչական կաղապարի:

Հետաքրքրական կարող է լինել այս պատմութեան մէջ Յովհաննէս Երզնկացու հանդէս գալու հանգամանքների պարզաբանումը: Ինչպէս արդէն տեսանք, Սիմէոն

րատ» ամսագրում տպագրուած մի անանուն հարողման մէջ եւս, ուր պատմում է երկի բովանդակութեան մասին, առկայ է համանուն դիտարկում. «Բնական պատիժներն, որոնք Աստուած ուղարկել է Անեցոց վերայ, յիշեցնում են Իսրայէլացոց ազգի պատմութեան մէջ յիշատակուած մի քանի իրողութիւնք» (տե՛ս «Արարատ», 1888, թ. 2, էջ 89):
 32 Յատկանշական է, որ հեղինակը, կարծես ցանկանալով մատնանշել աստուածաշնչական օրինաչափութեան պահպանումը, Յովհաննէս Երզնկացուն համեմատում է Նոյի ու Յովհանի հետ (Աբրահամ Կրետացի, էջ 105):

Լեհացու ցուցումներից կարելի է հասկանալ, որ անէծքի գործառույթը սկզբնապես վերապահուել է Աստուծոն: Հետեւաբար՝ կա՛մ Յովհաննէս Երզնկացու միջնորդական առաքելութեան մասին պատկերացումները ժողովրդական ընկալումներում աւելի ուշ են յայտնուել, կա՛մ դա Աբրահամ Կրետացու գրչի արգասիքն է³³: Այսուհանդերձ, այդչափ կարելորդ դերակատարութիւնը հայոց մշակոյթի բազմաթիւ գործիչներից ինչո՞ւ հէնց նրան վերագրուեց³⁴: Կարծում ենք, որ առաւել հաւանական կարելի է համարել հայաբնակ բազմաթիւ վայրեր կատարած ուղեւորութիւնների եւ հայութեանն ուղղուած նրա մեծաթիւ խրատական թղթերի արձագանքով բացատրող տեսակէտը, քանի որ համանման գործունէութիւնը նրա համար ա-

33 Այն, որ ԺԹ դ. բազմաթիւ հեղինակներ յիշատակում են Յովհաննէս Երզնկացու անէծքը, կարելի է պայմանաւորուած համարել Մ. Չամչեանի Պատմութեանը դիմելու հանգամանքով: Վերջինս համապատասխան հատուածը շարադրել է ըստ Ղազար Զահկեցու աշխատութեան, որի ու Աբրահամ Կրետացու երկի առնչակցութեան խնդրին կ'անդրադարձանք ստորեւ:

34 Խնդիրը վ. Դեռիկեանի կողմից առաջարկուել է լուծել հետեւեալ կերպ. «Բագրատունեաց երբեմնի մայրաքաղաքը կործանուել է 1319 թ., իսկ Երզնկացին վախճանուել է 1293 թ., եւ այս առումով քաղաքի կործանմանը ամենամօտ գտնուող ամենանշանաւոր վարդապետն է, ուստի ժամանակային որոշակի տեղաշարժով ժողովուրդը հէնց նրան է վերագրել Անիի կործանման անէծքը» (Վ. Դեռիկեան, ԱԶ. աշխ., էջ 61): Կարծում ենք, որ ժամանակագրութեան հարցի քննարկումը տեղին չէ, քանի որ ժամանակագրական անհամապատասխանութիւնները սովորական երեւոյթ են ժողովրդական մտածողութեան ասպարէզում: Բացի այդ, միանշանակ չէ երկրաշարժի թուագրումը 1319 թ. եւ դրա հիման վրայ եզրայանգումների առաջադրումը, քանի որ, ինչպէս ցոյց կը տրուի լետագայ շարադրանքում, սկզբնաղբիւրներում չարձանագրուած անիական երկրաշարժի մասին տեղեկութիւնը թերեւս զալիս է քննութեան առարկայ գրոյցից, եւ ոչ թէ հակառակը:

պահովում էր միջնորդի դերակատարութիւն ստանձնելու կարողութիւն³⁵:

Տեղին կը լինի քննութեան առնել անեցիների մտածողութեան համար բնութագրական մի գրուածք, երբ տեղի ունեցող անյաջողութիւնները բացատրուել են քաղաքի բնակչութեան կողմից որեւէ նշանաւոր գործչի հասցուած վիրաւորանքով: Ըստ Կիրակոս Գանձակեցու հաղորդման՝ ԺԲ դ. վերջին – ԺԳ դ. սկզբին անեցիները մտահոգուած էին հայոց կաթողիկոսի աթոռը միառժամանակ զբաղեցրած Դէոսկորոսի «մասն ինչ ի նշխարաց» Անի տեղափոխելու խնդրով: Պատմագիրը նրանց մտադրութեան զրդապատճառը պարզաբանում է հետեւեալ կերպ. «Զի վասն նորա են, ասեն, այս կոտորուած, որ լինի ի քաղաքիս հանապազ յայլազգեաց. զի թերեւս թողութիւն արասցէ քաղաքիս վասն յանդգնութեանն, զոր գործեցին ընդ նա հարքն մեր»: Խնդիրն այն է, որ Դէոսկորոսը հայրապետական աթոռը զբաղեցրել էր Բջնիում արգելափակուած Պետրոս Գետադարձի փոխարէն: Բանտարկութիւնից վերջինիս ազատուելուց յետոյ «Ռամիկ բազմութիւնն քաղաքին Անույ» իսկական դատաստան տեսաւ Դէոսկորոսի հետ. անեցիները ոչ միայն «պատառեցին զքօղն յերեսաց նորա», այլեւ «հանին անարգանօք զնա ի քաղաքէն»³⁶: Այս անցուղարձերից շուրջ մէկուկէս դար անց ստեղծուած դժուարին կացութիւնը, փաստօրէն, Անիի բնակիչներին ստիպել է կապ որոնել Դէոսկորոսին հասցուած անարգանքի եւ իրենց անյաջողութիւնների միջեւ: Ակնյայտ է, որ գործ ունենք սիւժետային այն նոյն զարգացումների հետ, ինչն առկայ է Յով-

35 Յովհաննէս Երզնկացու գործունէութեան եւ խրատական թղթերի շուրջ տե՛ս Ա. Սրապեան, Յովհաննէս Երզնկացի, Երեւան, 1958, էջ 19-49. նոյնի, Յովհաննէս Երզնկացի Պոյուզ, կեանքը եւ գործը, Երեւան, 1993. Է. Բաղդասարեան, Յովհաննէս Երզնկացի եւ նրա խրատական արձակը, Երեւան, 1977:

36 Կիրակոս Գանձակեցի, էջ 90-91:

հաննէս Երզնկացու պարագայում: Սակայն վերջինիս՝ Անիում լինելու եւ անեցիների հետ առնչութիւնների որեւէ գրուածք յայտնի չէ: Ուստի կարելի է նշել, որ ժողովրդական ընկալմամբ, Դէոսկորոսին աւելի է համապատասխանում անէծքի գործառույթը: Այս դիտարկումը, ինչպէս նաեւ՝ Միմէոն Լեհացու ցուցումը հաւանականութեան նժարը թերեւս թեքում են այն տեսակէտի օգտին, որ Յովհաննէս Երզնկացու ընտրութիւնը կատարուել է Աբրահամ Կրետացու կողմից:

«Պատմութիւն Անի քաղաքին» երկի վերջին հատուածը, ինչպէս նշել ենք, առնչուում է կաթաղապարկութեան պատմութեանը: Երկրաշարժից խոյս տուած անեցի գաղթականների հանգրուանները թուարկելուց յետոյ Աբրահամ Կրետացին առանձնապատուկ ուշադրութիւն է դարձնում «առ եզերս Կասպից ծովուն» ապաստանած բնակչութեան վրայ: Գաղթականութեան այդ խմբերը «առեալ հրաման ի Թաթար խանէն, բնակեցան ի Աղսարայ կոչեցեալ վայրի՝ որ է մերձ Աժտէրխանու», այսինքն՝ հաստատուեցին Ոսկէ Հորդայի մայրաքաղաք Հին Սարայում³⁷: Այ-

նուհետեւ տեղացիների ճնշումների պայմաններում «գետապան յղեն ի Կաֆայ» եւ 1330 թ. տեղափոխուած են Ղրիմ, որտեղ արդէն իսկ առկայ էր մեծաքանակ հայութիւն³⁸: Հետաքրքիր է, որ երկուսն երկայացուում է նաեւ Կաֆայի երկրորդ պարսպի կառուցումը հայերի կողմից³⁹:

Աւելորդ չէ Աբրահամ Կրետացու երկի վերջնամասի եւ զրիմահայութեան կողմից ստեղծուած գրաւոր յուշարձանների բնագրային աղբրսի պարզաբանման հարցը: Համեմատութիւնը թոյլ է տալիս հաւանական համարել կաթողիկոս-պատմագրի ծանօթութիւնը ինչպէս Դաւիթ Ղրիմեցու յիշատակարանին, այնպէս էլ՝ Մարտիրոս Ղրիմեցու տաղիւն⁴⁰: Այսպէս՝ անեցի գաղթականների երթուղու համանման նկարագրութիւնը ցոյց տալու համար բերենք մի օրինակ.

38 Ղրիմահայութեան՝ անեցիների շտապի լինելու այս պատկերացումների արժանահատութեան խնդիրը յատուկ հետազոտութիւն է պահանջում: Նշենք միայն, որ ձեռնարկուել է հարցը լեզուաբանական հարթութեան վրայ դիտարկելու եւ անեցիների ու Ղրիմահայերի խօսուածքների միջեւ համեմատութիւն անցկացնելու հետաքրքրական փորձ (տե՛ս Ն. Պօղոսեան, Անդրադարձ Անիի վիմագիր արձանագրութիւնների լեզուի, «Պատմամշակութային ժառանգութիւն եւ արդիականութիւն» միջազգային գիտական նստաշրջանի զեկուցումների դրոյթներ», Երեւան, 2013, էջ 43-44):

39 Աբրահամ Կրետացի, էջ 108-109: Կաֆայի պարսպաշինութեան մասին տե՛ս Վ. Միքայէլեան, ԱԶ. աշխ., 328-332:

40 Ընդհանուր աղբիւրի անկալութեան տարբերակը ըստ երեւոյթի կորցնում է իր հաւանականութիւնը Մարտիրոս Ղրիմեցու այն դիտարկման պարագայում, որի համաձայն՝ Ղրիմահայութեան պատմութիւնը իրենից առաջ գրաւոր աւանդման չի արժանացել (Ա. Մարտիրոսեան, ԱԶ. աշխ., էջ 143):

37 Ելնելով ժամանակագրական ցուցումից՝ գաղթականութեան հաստատման վայր պետք է համարել Հին Սարայը, քանի որ Ոսկէ Հորդայի միւս մայրաքաղաքը՝ Նոր Սարայը, հիմնուել է աւելի ուշ՝ 1332 թ. (քաղաքի մասին տե՛ս С. Atwood, Encyclopedia of Mongolia and the Mongol Empire, Indiana University, Bloomington, 2004, pp. 488-489): Յատկանշական է, որ պահպանուել է մի Աւետարանի ընդօրինակութիւն՝ կատարուած 1319 թ. Հին Սարայում (Ա. Յովհաննիսեան, Հայերի ոռոսական կողմնորոշման միջապատմութիւնից, ՊԲՀ, 1958, թիւ 1, էջ 71):

**Աբրահամ Կրետացի,
Պատմություն Անի քաղաքին**

Թողլով զբաղաբն եւ զեկեղեցիսն եւ զոսկե-
զօծ պալատսն եւ զծաղկաւէտ դաշտս իւրեանց,
զնացին որպէս փախստական, ճեղքեալ կէսքն ի
ճուղայ, եւ կէսքն առ եզերս Կասպից ծովուն, եւ
ոմանք ի Վան, եւ այլքն ի Սիս:

Այս երկու հեղինակները իրարից հե-
ռանում են Ղրիմում անեցիները հաստատ-
ման թուականը նշելիս. եթէ յիշատակա-
բանում այդ իրադարձութիւնը թուագր-
ւում է 1330 թ., ապա «Պատմութիւն Անի
քաղաքին» երկում՝ 1331 թ.: Աբրահամ
Կրետացին այս հարցում հետեւում է Մար-
տիրոս Ղրիմեցուն: Վերջինիս «Պատմու-
թիւն Ղրիմայ յերկրի» տաղը նաեւ ոճա-
կան-արտայայտչական ընդհանրութիւն-
ներ ունի Աբրահամ Կրետացու երկի հետ:
Այսպէս օրինակ՝ երկու հեղինակներն էլ
նախընտրում են նոյնութեամբ գործածել
«ծաղկաւէտ եւ հացուտ գաւառն Շիրա-
կուան» արտայայտութիւնը:

Աբրահամ Կրետացու «Պատմութիւն
Անի քաղաքին» երկը, այսպիսով, բաղկա-
ցած է աղբիւրագիտական հենքի առումով
իրարից տարբեր երկու մասերից: Առաւել
խոշոր հատուածում գրաւոր մշակման է
ենթարկուած Անիի կործանման աւանդա-
գրոյցը, իսկ վերջնամասը ներկայացնում է
կաֆազայութեան պատմութեան սկզբնա-
ւորումը: Եւ եթէ առաջին մասը բանահիւ-
սական հենք ունի, ապա երկրորդի հիմ-
քում թերեւս ընկած են զրիմահայութեան
երկու գրաւոր յուշարձանները⁴¹:

Բագրատունեաց Հայաստանի երբեմ-
նի մայրաքաղաքի անկման ժողովրդական
ընկալումն արտացոլում է ստացել նաեւ

41 Աբրահամ Կրետացու երկի համար յիշատակա-
րանի ու տաղի՝ սկզբնաղբիւր ծառայած լինելը
ընդունում է Ասէս Կ. Մաթեոսեանը (Կ. Մաթեո-
սեան, Աշ. աշխ., էջ 276, ծմբ. 15):

**Դաւիթ Ղրիմեցի, Ղրիմահայերի պատ-
մություն-յիշատակարան**

Բագումք թողլով զոսկեզօծ պալատս եւ
զծաղկաւէտ դաշտս վանօրայս եւ զեկեղեցիս ա-
ւեր, չուեալ եկին որպէս փախստական ի յԱղսա-
րայ՝ որ է ի մէջ Հաշտարխանու եւ Ղազանու.
ոմանք զնացին ի Ջուղայ. ոմանք ի Վան. եւ
ոմանք ի Սիս:

Հայոց կաթողիկոսներից միւսի՝ Ղազար
Ջահկեցու (1737-1751 թթ.) «Գիրք աս-
տուածաբանական որ կոչի դրախտ ցան-
կալի» աշխատութեան մէջ⁴²: Հեղինակը,
իր առաջ խնդիր դնելով շարադրել Հայոց
ամբողջական պատմութիւն, անդրադառ-
նում է նաեւ մշակոյթի նշանաւոր գործիչ-
ներին: Վարդապետներին նուիրուած բաժ-
նում ընդարձակ հատուածներ են յատկա-
ցուած Յովհաննէս Երզնկացու գործու-
նէութեան ներկայացմանը: Այս կապակ-
ցութեամբ Ղազար Ջահկեցին հաղորդում է
Անիում վերջինիս միջնորդական առաքե-
լութեան մասին, որի նպատակն էր դարձի
բերել քաղաքի բնակչութեանը⁴³: Ընդ ո-
րում, համեմատութիւնը ցոյց է տալիս, որ
Հայոց երկու կաթողիկոսների գրական
ստեղծագործութիւնների համապատաս-
խան հատուածների միջեւ առկայ է բնա-
գրային ակնյայտ հարազատութիւն: Պատ-
կերն առաւել հասկանալի դարձնելու հա-
մար բաւարար կը լինեն բերուած մի քանի
օրինակները.

42 Հրատարակութեան տարեթուի շուրջ վերջնա-
կան տեսակէտ չկայ (Ս. Այվազեան, Հայոց եկե-
ղեցի XVIII դարի հայ ազատագրական շարժ-
ման քառուղիներում, Երեւան, 2003, էջ 103):
Գրքի յիշատակագրութեան համաձայն՝ տպա-
գրութիւնը, այնուհանդերձ, պէտք է կատարուած
լինի 1735 թ.:

43 Ղազար Ջահկեցի, Գիրք աստուածաբանական
որ կոչի դրախտ ցանկալի, Կ. Պոլիս, 1735, էջ
629-634:

**Աբրահամ Կրետացի,
Պատմություն Անի քաղաքին**

Յայնժամ կրկին բարկացաւ Տէր. եւ առա-
քեաց գազանս շարս եւ այլակերպս՝ նման գայ-
լոց. որ գային ի մէջ գիշերի եւ մտանէին ի տունս
տունս:

Այլ եւ կին մի ընդ նոսա ունելով զմիամօր
որդին իւր խոցոտեալ եւ կտրատեալ անդամօք,
զոր թափեալ էր ի գազանացն, լայր կինն եւ ա-
ղաղակէր առաջի վարդապետին:

Յետ ոչ բագում ամաց զգուեալ ի նետողաց
դժնեաբարոյ ազգացդ՝ դեսպան յղեն ի Կաֆայ՝ առ
լատին իշխանն՝ որ էր ի մէջ բերդին, զոր Ֆռանկ-
Հիսար ասեն:

Փաստօրէն երկու երկերի խնդրոյ ա-
ռարկայ հատուածներում շարադրանքը
գրեթէ նոյնական է. հանդիպում են միայն
բառային առանձին տարբերութիւններ:
Ուստի ակնյայտ է բնագրերից մէկի կա-
խումը միւսից: Այս պայմաններում հաս-
կանալիօրէն առաջ է գալիս այսպիսի հար-
ցադրում ինչպէ՞ս բացատրել այս իրողու-
թիւնը, եւ ո՞ր երկն է գրուել աւելի վաղ:
Հարկ է նկատի ունենալ, որ «Դրախտ ցան-
կալի»-ն ընդգրկում է «Պատմութիւն Անի
քաղաքին» երկի միայն այն հատուածը,
որն սկսւում է Յովհաննէս Երզնկացու
գործունէութեան ներկայացմամբ: Բացա-
կայող մասը թէեւ խախտում է սիւսետա-
յին ամբողջականութիւնը, այնուհանդերձ
լիովին համահունչ է Ղազար Ջահկեցու
նպատակադրմանը՝ պատմել Հայոց նշա-
նաւոր վարդապետներից մէկի մասին: Եր-
կի բաց թողնուած հատուածը, որը վերա-
բերում է Անիի հիմնադրմանը, թագաւո-
րութեան անկմանն ու հասարակութեան
բարոյազրկմանը, միանգամայն աւելորդ է
Ղազար Ջահկեցու հայեցակէտից: Ուստի
առաւել հաւանական է կարծել, որ
սկզբնապէս շարադրուել է Աբրահամ Կրե-
տացու Պատմութիւնը, որի՝ Յովհաննէս
Երզնկացուն վերաբերող դրուագները այ-
նուհետ գրեթէ նոյնութեամբ տեղ են գտել

**Ղազար Ջահկեցի,
Դրախտ ցանկալի**

Յայնժամ բարկացեալ Տէր առաքեաց զգա-
զանս շարս եւ այլակերպս. որ գային ի մէջ գիշե-
րի երամակօք եւ մտանէին տանէ ի տուն:

Այլ եւ կին մի ունելով զմիամօր որդի զօր
յափշտակեալ եղել ի գազանաց. գայ արտասուօք
անկանի առ ոտս վարդապետին:

Եւ յետ ոչ բագում ամաց զգուեալ ի նետո-
ղաց դժնեաբարոյ ազգացն, դեսպան յղեն ի Կա-
ֆա առ լատին իշխանն որ էր ի մէջ միջաբերթի-
զոր ՖրանկՀասար ասեն:

«Դրախտ ցանկալի»-ում: Այս ենթադրա-
կան գործընթացը հիմնաւորում է Հէնց
Ղազար Ջահկեցու մի վկայութեան շնոր-
հիւ. «Ի գալն իմ ի Կոստանդնուպօլիս յա-
ղազս նուիրակութեան սրբոյն էջմիածնի
մօրն հաւատոյ եւ ի ժամանելն իմ ի Թրա-
կիա ի ՌձՁԱ (1732) թուականիս մերում՝
անդ սկսայ ի կիր արկանելով ծնանիլ գայս
գործս վաղեմասաղմ, նէր երեք ամսոջ,
շնորհօք ամենագորին Աստուծոյ եւ հոգա-
բարձութեամբ նորին դիտի Տեառն Աբրա-
համու երջանկազարդ ռաբունապետին»⁴⁴:
Այս հաղորդումը հնարաւորութիւն է տա-
լիս ճշտելու, որ Ղազար Ջահկեցին իր աշ-
խատութիւնը գրել է 1732 թ.: Հէնց Թրա-
կիայում գտնուելու ժամանակ: Նա չի մո-
ռանում յիշատակել նաեւ թեմի առաջնոր-
դին՝ ապագայ կաթողիկոս Աբրահամ Կրե-
տացուն: Կարծում ենք՝ «Դրախտ ցանկա-
լի»-ի հեղինակի այս հաւաստի ցուցումը
միանգամայն հնարաւոր է դարձնում հա-
յոց երկու կաթողիկոսների ստեղծագործա-
կան փոխշփումները եւ զգալի չափով մե-
ծացնում մեր ենթադրութեան հաւանակա-
նութիւնը:

Ի վերջոյ, յատուկ անդրադարձի կա-
րիք է զգում նաեւ բազմիցս յիշատակուած

44 Նոյն տեղում, էջ 680 (ընդգծումը մերն է - Ա. Բ.):

երկրաշարժի պատմականությունը⁴⁵: Այս ուղղությունում ծառայում են քննարկումները վերջնական եզրակացությունների չեն յանգել, իսկ սկզբնաղբերներն էլ լուրջ են այս կապակցությունում⁴⁶: Ուստի պատահական չէ, որ աւանդաբար 1319 թ. թուրքերը երկրաշարժը ներկայացնելիս հետազոտողները դժուարանում են նշել աղբերակազրկության որեւէ ուղղակի վկայություն⁴⁷:

45 Հարցի շուրջ տե՛ս Թ. Յակոբեան, Գ. աշխ., էջ 328-332:

46 Յ. Մանանդեանը փորձում է այս մասին ակնարկ գտնել մի վիճակի արձանագրության մէջ (Յ. Մանանդեան, *Քննարկում տեսության հայ ժողովրդի պատմության*, «Երկր», հտ. Գ, Երևան, 1976, էջ 330-332), որն իրականում անթուական է, եւ որում յիշատակուող քաղաքի անունները պարտադիր չէ, որ անխորհրդէր երկրաշարժ: Տեղին կը լինի նշել, որ մնացած արձանագրություններում բացակայում է որեւիցէ ակնարկ քննություն անարկայ երկրաշարժի վերաբերելու:

47 Այսպէս՝ Մ. Չամչեանը լուսանցքում մատնանշում է իր համար հիմք ծառայած սկզբնաղբերը՝ «պատմ»: (Մ. Չամչեան, *Պատմություն Հայոց*, հտ. Գ, Վեներտիկ, 1786, էջ 317), այն է՝ «գանազան պատմությունը անծանօթ անձանց» (նոյնի, *Պատմություն Հայոց*, հտ. Ա, Վեներտիկ, 1784, էջ 19): Ոչ մի ուղղակի վկայություն չի նշում նաեւ Հայկական լեռնաշխարհում տեղի ունեցած երկրաշարժերը յատուկ քննության անարկայ դարձրած Վ. Ստեփանեանը՝ բաւարարելով ուսումնասիրողների տեսակետների անկայացմամբ եւ Սամուէլ Անեցու շարունակողներից մէկի մի հարցում (Սամուէլ Անեցի եւ շարունակողներ, *Ժամանակագրություն*, աշխատասիրութեամբ Կ. Մաթեոսեանի, Երևան, 2014, էջ 274), որում, սակայն, ոչ մի ցուցում չկայ Անիի մասին (Վ. Ստեփանեան, *Երկրաշարժերը Հայկական լեռնաշխարհում եւ նրա մերձակայքում*, Երևան, 1964, էջ 62-64): Պատահական չէ, որ ի թիւս այլ քաղաքների՝ Անիում տեղի ունեցած երկրաշարժերը յատուկ քննության անարկայ դարձրած Մ. Հասրատեանը չի յիշատակում խնդրյալ անարկայ երկրաշարժը (M. Hasratyan, *The medieval earthquakes of the Armenian Plateau and the historic towns of Ayrarat and Shirak* (Dvin, Ani, Erevan), *Annali di geofisica*, vol. XXXVIII (1995), N. 5-6, pp. 719-722), որի պատմականությունը բացառելու տեսակետին են հակում նաեւ Վ. Բարտոլդեան (*Персидская надпись на стене анийской мечети Мануче*, СПб., 1911, с. 10) եւ Ն. Մարը (H. Mapp, *Ani, книжная история го-*

ՏԱԹԵԻԻ ՎԱՆՔԻ ՎԻՄԱԳՐԵՐԻ ՆԱԽԸՆԹԱՅ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՒ ՆԵՐԿԱՅ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ

Արսէն Յարութիւնեան

Տաթեի վանական համալիրի պատմության ուսումնասիրման համար անփոխարինելի սկզբնաղբերներ են յուշարձանաբանի որմերին, խաչքարերին ու տապանաքարերին պահպանուած վիճակները: Տարբեր ժամանակներում ու տարբեր առիթներով հետազոտողներն իրենց աշխատություններում վկայակոչել ու գիտական շրջանառության մէջ են դրել մի շարք վիճակներ, որոնցից մի քանիսը նոյնիսկ մեզ չեն հասել: Վիճակն արձանագրությունների գիտական հրատարակություններն ամփոփուած են «Դիւան հայ վիճակագրության» ակադեմիական մատենաշարում՝ դասակարգուած սկզբնապէս ըստ Հայաստանի շրջանների, ներկայումս՝ ըստ մարզերի: Միջազգային Corpus անունով առաւել յայտնի հատորաշարում վիճակները հրատարակուած են համաձայն ակադեմիկոսներ Ն. Մառի եւ Յ. Օրբէլու՝ Անիի վիճակները տպագրութեան պատրաստելու առիթով մշակած սկզբունքների (վիճակներին կից գրչանկար, լուսանկար, վերծանությունները համապատասխան պայմանական նշաններով եւ այլն)¹: Դրանք էապէս տարբերուած են վիճակների նախ-

ընթաց հրատարակություններից, որոնք տեղ են գտել պատմագրական մի քանի երկերում² եւ ուսումնասիրություններում: Վերջիններս հիմնականում ԺԹ. դարի տեղագրական բնոյթի աշխատություններ են՝ ստեղծուած մեծ մասամբ հոգեւորականների կողմից, ովքեր, շրջագայելով Հայաստան աշխարհի ու նրա սահմաններից դուրս գտնուող մի շարք բնակավայրերում, թղթին են յանձնել իրենց տպաւորությունները՝ յուշարձանների նկարագրություններին զուգահեռ վկայակոչելով նաեւ վիճակներ³: Այսօրինակ աշխատու-

2 Հայերէն վիճակներն իբրեւ աղբերակազրկուած հաւաստի վաւերագրեր կարելի է ու առաջին անգամ իր պատմության մէջ օգտագործել է Սիւնեաց մետրոպոլիտ Ստեփանոս արք. Օրբէլեանը (*Պատմություն Բանանցի Սիւնեաց, Թիֆլիս*, 1910), ԺԷ. դարում Յովհաննաս վանքի միաբան Ջաքարիա Սարկաւազ Բանաքեղցին, հաւաքելով տեղի վիճակները, որանք անկայացրել է իբրեւ իր պատմագրության առաջին գլուխ, որով եւ կազմել է վանքի «Կոնդակը» (Ջաքարիա Բանաքեղցի, *Պատմություն: Կոնդակ Սուրբ ուխտին Յոհաննու վանից*, աշխ. Ա. Վիրաբեանի, Երևան, 2015): Այս շարքում անուրանալի վաստակ ունի նաեւ Գանձասարի կաթողիկոս Եսայի Հասան-Ջալալեանը, ում՝ Խաչէնի տարածաշրջանի եւ շրջակայքի վիճակները ամբողջացնող տեղորի վաղադրյալ ընթացակարգի մասին (գրուած Գանձասարում՝ 1809 թ., Բաղդասար մետրոպոլիտ Հասան-Ջալալեանի ձեռքով) վերջերս մեր կողմից դրուեց գիտական շրջանառութեան մէջ (Ա. Յարութիւնեան, *Եսայի Հասան-Ջալալեանի վիճակագրական վաստակը (ըստ ՄՄ թիւ 7821 ձեռագրի)*, - «Լեւոնտիս», 2015, Ժ, էջ 117-159):

3 ԺԹ. դարում լայն տարածում է ստացել տեղագրական բնոյթի աշխատությունների հրատարակությունը. դրանց թիւն այնքան մեծ է, որ կը բաւարարուեն միայն մի քանիսը նշելով՝ Մինաս Բժշկեան, *Ժամանակահատվածները ի Լեւոնտիս*

Այնուհանդերձ, ողջ ԺԳ դ. քաղաքային կեանքը Անիում չի ընդհատուել, ինչի վկայություններն են թողնուած վիճակներ արձանագրություններն⁴⁸ ու դրամագիտական մեծաքանակ նիւթը⁴⁹: Սկզբնաղբերներում որեւիցէ կերպ արտացոլուած չլինելու հանգամանքը մղում է աւելի հաւանական համարելու այն տեսակետը, որ անիական երկրաշարժի մասին պատկերացումները, իրական փաստի վրայ հիմնուած չլինելով, բխում են ժողովրդական աւանդագրոյցից⁵⁰:

Այսպիսով՝ հայոց պետականության խորհրդանշիչ դերակատարություն ձեռք բերած Անի քաղաքը ժողովրդական ընկալումներում արտացոլուել է երկակի կերպով: Մի կողմից՝ Բագրատունեաց մայրաքաղաքի երբեմնի փառքը հայրենիքի շրջանում առաջ է բերել անգամ անեցիներ շառաւիղ համարուելու ցանկութիւն, իսկ միւս կողմից՝ Անին մտազուգորդուել է անիծուած քաղաքի կերպարի հետ: Հայրենիքի հաւաքական մեղաւորութեան միջնադարեան ըմբռնուած տեղայնացուել է եւ հիմք ծառայել Անիի անկման աւանդագրոյցի ստեղծման համար: Աստուածաշնչական կաղապարի հիմքի վրայ անցնելով գրաւոր մշակման փուլ՝ այն, ի վերջոյ, տեղ է գտել հայոց կաթողիկոսներ Աբրահամ Կրետացու եւ Ղազար Ջահեցու աշխատություններում:

рода и раскопки на месте городища, Л.-М., 1934, с. 44, 125):

48 Դիւան հայ վիճակագրության, պրակ Ա, կազմեց Յ. Օրբէլի, Երևան, 1966, էջ 10, 67:

49 A. Vardanyan, *The evidence of coins on the history of Ani in the 14th-15th centuries*, - *Journal of Armenian Studies*, 2013, N 2-3, pp. 202-237.

50 Աւելորդ չի լինի նշել, որ աւանդություններից մէկում երկրաշարժի փոխարէն հանդէս է գալիս «մուգ գոյնի ձիւնը» (Ա. Ղանալանեան, Գ. աշխ., էջ 406):

1 «Դիւան հայ վիճակագրության» Ա. պրակի սկզբում գետնորում են ակադ. Յ. Օրբէլու՝ Սանկտ Պետերբուրգի համալսարանում 1914 թ. կարդացած «Օրբէլի վիճակագրությունները» դասընթացը անկայացնող «Հայկական վիճակն արձանագրությունների գիտական նշանակությունը» գեղարվեստական վիճակագրութեան խորագրով առաջաբանը, որոնցում, ըստ հարկի, արժեւորուել են վիճակների կարեւորությունն ու դրանց գիտական հրատարակությունների անհրաժեշտությունը (*Դիւան հայ վիճակագրության*, պրակ I, կազմեց՝ Յ. Ա. Օրբէլի, Երևան, 1966, էջ V-XXX):